FASTBANK

*Հավելված 2*
*15/10/2024թ-ի DEC 12-71 արձանագրություն*
*Ուժի մեջ է մտնում 21.10.2024թ.-ից*

| ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ | |
|---|---|
| Տեսակը | Հայաստանի Հանրապետությունում ջերմատնային տնտեսությունների զարգացման աջակցության ծրագիր տոկոսադրույքի սուբսիդավորմամբ |
| Վարկի նպատակը | ՀՀ-ում նպաստել ջերմատնային տնտեսությունների մակերեսի, արտադրության և արտահանման ծավալների ավելացմանը, արտադրանքի մրցունակության մակարդակի բարձրացմանը, գյուղատնտեսությունում տնտեսավարողների եկամուտների ավելացմանը |
| Վարկի արժույթ | ՀՀ դրամ |
| Վարկառու | 18-65 տարեկան ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձ,<br>ՀՀ ռեզիդենտ իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր |
| Վարկի մայր գումարի վճարման արտոնյալ ժամկետ | 0-12 ամիս* |
| Վարկի ժամկետ | 24-96 ամիս |
| Վարկի գումար** | Նվազագույն՝ 100,000,000 ՀՀ դրամ<br>Առավելագույն՝ 3,000,000,000 ՀՀ դրամ |
| Վարկի տրամադրման եղանակ | Միանվագ, փուլային |
| Վարկի տարեկան անվանական տոկոսադրույք /հաստատուն/ | 14% |
| Վարկի տարեկան փաստացի տոկոսադրույք | 14,93-15% |
| Սուբսիդավորման չափ | 10 տոկոսային կետ |
| Վարկի տրամադրման և սպասարկման վճար | Չի սահմանվում |
| *Ժամկետանց մայր գումարի տույժ* | *0.1% օրական* |
| *Ժամկետանց տոկոսի տույժ* | *0.13% օրական* |
| *Վարկի վաղաժամկետ մարման տույժ* | Չի սահմանվում |

| | |
|---|---|
| **Ապահովման միջոց** | ✓ Անշարժ գույք և/կամ տրանսպորտային միջոց***,<br>✓ Վարկային Կոմիտեի որոշմամբ կարող են նախատեսվել նաև այլ ապահովման միջոցներ:<br><br>***Ավտոտրանսպորտային միջոց, որի արտադրման ժամկետը գրավադրման պահին չպետք է ավելի մեծ լինի, քան՝<br>✓ պարտադիր գրավի առարկա է հանդիսանում հողամասը, որի վրա կառուցվելու է ջերմոցային տնտեսությունը<br>✓ ռուսական արտադրության ավտոտրանսպորտային միջոցի համար՝ 5 տարին,<br>✓ այլ երկրների արտարդրության ավտոտրանսպորտային միջոցի համար՝ 10 տարին: |
| **! Ավտոտրանսպորտային միջոցը ենթակա է պարտադիր «Կասկո» (ֆիզիկական վնաս և առևանգում) ապահովագրության հօգուտ Բանկի՝ առնվազն Վարկի գումարի չափով և Վարկի գործողության ամբողջ ընթացքում:** | |
| **Վարկ/Գրավ առավելագույն արժեք** | Գրավի գնահատված արժեքի առավելագույնը **70%**-ի չափով |
| **Գրավի գնահատում** | Գրավը ենթակա է գնահատման Բանկի հետ համագործակցող գույքի գնահատում իրականացնող անկախ գործակալության և/կամ Բանկի աշխատակցի կողմից՝ կախված վարկի գումարի չափից :<br>Բանկի աշխատակցի կողմից գնահատումն իրականացվում է անվճար: |
| **Մարման եղանակ** | ✓ Անուիտետային /մայր գումարի և տոկոսագումարի ամենամսյա հավասարաչափ վճարում/<br>✓ Դիֆերենցված/ Մայր գումարի ամենամսյա հավասարաչափ և տոկոսագումարի ամենամսյա վճարում/<br>✓ Անհատական վճարումների ժամանակացույց<br>Մարման եղանակը՝ ըստ հաճախորդի ընտրության |

* ա) Շահառուի դիմումով ֆինանսական կառույցը կարող է սահմանել վարկի մայր գումարի և տոկոսադրույքի համար արտոնյալ ժամկետ՝ առավելագույնը 12 ամիս,

բ) ֆինանսական կառույցը վարկի գործողության ընթացքում կարող է սահմանել վարկի մայր գումարի և տոկոսադրույքի, վճարման համար դադարի շրջաններ՝ տարեկան մինչև 3 ամիս ժամկետով և մարման գրաֆիկի ժամանակացույցի փոփոխություններ (առանց վարկի մարման ժամկետի փոփոխության)՝ շահառուի և ֆինանսական կառույցի փոխադարձ համաձայնությամբ:

** Նույն շահառուին տրամադրվող վարկի (վարկերի) առավելագույն հանրագումարը չի կարող գերազանցել՝ 3,000,000,000 ՀՀ դրամը

### Ծանոթություն

1. Երրորդ անձանց կողմից մատուցվող ծառայությունները և դրանց վճարներն են.

1.1 Անշարժ գույքի՝ այդ թվում հողամասի, գրավադրման դեպքում.

- ✓ Անշարժ գույքի սահմանափակումների վերաբերյալ տեղեկանք՝ 10,000 ՀՀ դրամ,
- ✓ Գրավի պետական գրանցման վճար՝ 26,000 ՀՀ դրամ,
- ✓ Նոտարական վավերացման վճար՝ 16,000-20,000 ՀՀ դրամ:
- ✓ Գույքի գնահատման վճար՝ 15,000-25,000 ՀՀ դրամ:

**1.2** Ավտոմեքենայի գրավադրման դեպքում.

- ✓ Ավտոտրանսպորտային միջոցի սահմանափակումների մասին տեղեկանք՝ 3,000-4,000 ՀՀ դրամ,
- ✓ Գրավի պետական գրանցման վճար՝ 2,000-3,000 ՀՀ դրամ,
- ✓ Գրավի ապահովագրություն՝ վարկի գումարի 2.5%-ի չափով,
- ✓ Նոտարական վավերացման վճար՝ 11,000-12,000 ՀՀ դրամ
- ✓ Գույքի գնահատման վճար՝ սկսած 5,000-20,000 ՀՀ դրամ:

**2.** Հայաստանի Հանրապետությունում ջերմատնային տնտեսությունների զարգացման պետական աջակցության ծրագրին կարող եք ծանոթանալ անցնելով հետևյալ հղումով (յուրաքանչյուր շահառուի կողմից կառուցվող յուրաքանչյուր մեկ ամբողջական ջերմատան մակերեսը պետք է կազմի 1 հա և ավելի)՝ https://mineconomy.am/media/24825/15.pdf

**3.** Անկախ սույն պայմաններում նշված 3-րդ անձանց վճարների դրույքաչափերից, վերջիններիս կողմից մատուցվող ծառայությունների դիմաց վճարները կարող են փոփոխվել:

**4.** Վարկի տոկոսները հաշվարկվում են վարկի մնացորդի նկատմամբ՝ ելնելով տարում 365 օրվա հաշվարկից:

**5.** Վարկը տրամադրվում է անկանխիկ եղանակով:

**6.** Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, ինչպես նաև Կազմակերպության հետ համագործակցող ապահովագրական ընկերությունների և անկախ գնահատողների ցանկը սահմանվում են առանձին Հավելվածներով:

**7.** *Վարկը տրամադրվում է Կազմակերպության Գլխամասային գրասենյակում, «Շրջանային», «Ավան», «Դավթաշեն», «Մովսես Խորենացի», «Սեբաստիա», «Կոմիտաս», «Բաղրամյան» , «Թումանյան», «Էրեբունի», «Հարավ-Արևմտյան», «Շենգավիթ», «Ալեք Մանուկյան», «Արմավիր», «Արտաշատ», «Մասիս», «Գորիս», «Գյումրի», «Վանաձոր», «Աբովյան», «Հրազդան», «Էջմիածին», «Մարտունի», «Սևան», «Գավառ», «Աշտարակ», «Իջևան», «Վեդի», «Արթիկ», «Եղեգնաձոր», «Կապան», «Անի» մասնաճյուղերում:*

**8.** Վարկի տրամադրման դրական որոշման կայացման գործոններն են.

- ✓ Վարկառուի և Գրավի համապատասխանությունը սույն փաստաթղթով սահմանված պահանջներին:
- ✓ Հայտի ներկայացման օրվա դրությամբ հաճախորդի գործող վարկային պարտավորությունները պետք է դասակարգված լինեն ստանդարտ դասով, իսկ նախորդ 12 ամիսների ընթացքում ժամկետանց վարկային պարտավորությունների հանրագումարը չպետք է գերազանցի 60 օրը:

**9.** Վարկի մերժման գործոններն են.

- ✓ Վարկառուի և/կամ Գրավի անհամապատասխանությունը սույն փաստաթղթով սահմանված պահանջներին:

10. Պահանջվող փաստաթղթերը ներկայացնելուց հետո վարկային հայտի վերաբերյալ որոշման կայացում, Վարկառուին տեղեկացում մինչև 5 աշխատանքային օրվա ընթացքում:
11. Վարկի տրամադրում՝ պահանջվող բոլոր փաստաթղթերը ներկայացնելուց հետո մինչև 2 աշխատանքային օրվա ընթացքում:
12. Վարկի մարման նպատակով մուտքագրված ցանկացած գումար որպես կանոն Բանկի կողմից ուղղվում է մուտքագրման պահին առկա՝ Հաճախորդի կողմից Բանկի Վարկային պայմանագրի ուժով վճարման ենթակա գումարների, այդ թվում՝ տույժերի, սպասարկման վճարների, տոկոսների, Վարկի գումարի մարմանը: Բանկը իրավունք ունի Հաճախորդի հետ կնքվող պայմանագրում վճարման ենթակա գումարների այլ հերթականություն սահմանել:
13. Ոչ ֆինանսական ծառայությունների սակագները, այդ թվում քաղվածքների, պայմանագրերի կրկնօրինակների և այլ տեղեկությունների տրամադրման պայմանները հրապարակված են Կազմակերպության պաշտոնական կայքում՝ https://www.fastbank.am, ինչպես նաև տեղադրված են Կազմակերպության գործունեության վայրերում:
14. **ՀԱՃԱԽՈՐԴԻ ԿՈՂՄԻՑ ՎԱՐԿԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ՄԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՀԱՄԱՄԱՍՆՈՐԵՆ ՆՎԱԶԵՑՎՈՒՄ ԵՆ ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ, ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՆԱԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԸ, ԵԹԵ ՎԵՐՋԻՆՍ ՀԱՇՎԵԳՐՎՈՒՄ Է ՕՐԱԿԱՆ ԿՏՐՎԱԾՔՈՎ, ԻՍԿ 3-ՐԴ ԱՆՁԱՆՑ ԿԱՏԱՐՎԱԾ ՎՃԱՐՆԵՐԸ ԵՆԹԱԿԱ ՉԵՆ ՆՎԱԶԵՑՄԱՆ:**
15. **ԶԳՈՒՇԱՑՈՒՄ՝ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ, ՎԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԸ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԳՐԱՎԱԴՐՎԱԾ ԳՈՒՅՔԸ ԿԱՐՈՂ Է ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԲՌՆԱԳԱՆՁՎԵԼ:**
16. **ԱՅՆ ԴԵՊՔՈՒՄ, ԵՐԲ ԳՐԱՎ ԴՐՎԱԾ ԳՈՒՅՔԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՍՏԱՑՎՈՂ ԳՈՒՄԱՐԸ ՊԱԿԱՍ Է ԳՐԱՎՈՎ ԱՊԱՀՈՎՎԱԾ ՊԱՀԱՆՋԻ ԵՎ ԳՐԱՎ ԴՐՎԱԾ ԳՈՒՅՔԻ ԻՐԱՑՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐԻՑ, ԱՊԱ ՎԱՐԿԱՏՈՒՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՊԱԿԱՍ ԳՈՒՄԱՐԸ ՍՏԱՆԱԼՈՒ ՎԱՐԿԱՌՈՒԻ ԱՅԼ ԳՈՒՅՔԻՑ:**
17. **ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՁԵՐ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ԹԵՐԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ 3 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՅԴ ՏՎՅԱԼՆԵՐԸ ՈՒՂԱՐԿՈՒՄ Է ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ, ՈՐՏԵՂ ՁԵՎԱՎՈՐՎՈՒՄ Է ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՑ ՏԱՐԵԿԱՆ ՄԵԿ ԱՆԳԱՄ ԱՆՎՃԱՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՏ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ Է ԽՈՉԸՆԴՈՏԵԼ ՁԵԶ՝ ԱՊԱԳԱՅՈՒՄ ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ:**
18. **ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ, ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԿԱՐԺԵՆԱ ՎԱՐԿԸ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԵՎ ԱՅԼ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՈՒՄ ԵՎ ՉԱՓԵՐՈՎ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ: ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ՏԵՂԱԴՐՎԱԾ Է ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՅՔՈՒՄ (www.fastbank.am):**
19. **ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼ ԲԱՆԿԻ ՀԵՏ ՁԵՐ ՆԱԽԸՆՏՐԱԾ ԵՂԱՆԱԿՈՎ՝ ՈՐՈՆՑ ԿԱՐՈՂ ԵՔ ԾԱՆՈԹԱՆԱԼ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԷՋՈՒՄ ՝**https://www.fastbank.am**: ԲԱՆԿԸ ՊԱՐՏԱՎՈՐՎՈՒՄ Է ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՊԵՐԲԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆԲ, ՈՐԸ ՉՊԵՏՔ Է ԳԵՐԱԶԱՆՑԻ ՄԵԿ ԱՄԻՍԸ, ԼԻԶԻՆԳԱՌՈՒԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ ՊԱՅՄԱՆԱԳՐԻՑ ԲԽՈՂ ՍՊԱՌՈՂԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՄԱՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՎՈՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ**

FASTBANK

*Հավելված 2*
*15/10/2024թ-ի DEC 12-71 արձանագրություն*
*Ուժի մեջ է մտնում 21.10.2024թ.-ից*

20. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԲԱՆԿԸ ՊԱՐՏԱԴԻՐ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՁԵԶ ԿՏՐԱՄԱԴՐԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ: ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՈՒՄԸ ԱՄԵՆԱՀԱՐՄԱՐԱՎԵՏՆ Է, ԱՅՆ ՀԱՍԱՆԵԼԻ Է 24/7 ՌԵԺԻՄՈՎ, ԶԵՐԾ Է ԹՂԹԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿՈՐՍՏԻ ՌԻՍԿԵՐԻՑ ԵՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ: ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՀՐԱԺԱՐՎԵԼ ԲԱՆԿԻ ՀԵՏ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻՑ՝ ՊԱՐՏԱԴԻՐ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՄ ԿԱՊԻ ԱՅԼ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ՍՏԱՆԱԼՈՒ ՊԱՅՄԱՆՈՎ:
21. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՁԵՐ «ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՆ» ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՆՄԱՆ, ՀԱՄԵՄԱՏՄԱՆ ԵՎ ՁԵԶ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՏԱՐԲԵՐԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՇՏԱՑՆՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ Է:
22. ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՐԿԱՌՈՒԻ ԿՈՂՄԻՑ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԲԱՆԿՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ԵՐԱՇԽԱՎՈՐԻՑ ՊԱՀԱՆՋԵԼ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔԱՎ ՎԱՏԱՆԱԼՈՒ Է ԵՐԱՇԽԱՎՈՐԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐ Է ԶՐԿՎԻ ԻՐ ՍԵՓԱԿԱՆ ԳՈՒՅՔԻՑ: